Գ. Մեսրոպ Սմբատյանց, Ցուցակ [ձեռագրաց] գրատան Տաթևու վանից. [Տաթև], 1866: *Այս ցուցակի ուր գտնվելը մեզ հայտնի չէ։ Այդ մասին տեղեկանում ենք Մ. Սմբատյանցի «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ» աշխատությունից, ուր տալով Նախիջևան գավառի վանքերում ու եկեղեցիներում ընդօրինակված և Տաթևի գրատանը պահվող 13 ձեռագրերի նկարագրությունները, շեշտում է՝ «Ըստ ցուցակի գրատան Տաթևու վանից, կազմելոյ յինէն ի 1866 ամի»[7]։ Թե քանի՞ ձեռագրի նկարագրություն է ամփոփում այդ ցուցակը, հայտնի չէ։ Սակայն, եթե նկատի ունենանք, որ Մ. Սմբատյանցի ձեռքով 2 տարի հետո կազմված ցուցակը բովանդակում է 91 ձեռագրի նկարագրություն, ապա հազիվ թե տարբերությունը մեծ լինի։ Վերապահությամբ կարելի է ընդունել, որ 1866 թ. ցուցակը նույնպես ընդգրկել է 91 ձեռագիր։*

Դ. Մեսրոպ Սմբատյանց, Ցուցակ [ձեռագրաց գրատան Տաթևու վանից, Տաթև], 1868[8]: *Մ. Սմբատյանցի սույն ցուցակն անխորագիր է։ Ցուցակի 2-րդ էջի աջ անկյունում նշված է՝ «Մեսրովբ, 1868 թիւ, ցուցակ»։ Սույն ցուցակն անվանական մի ցանկ է, ուր առանց մատենագիտական տվյալների և առանց հերթական համարների նշման՝ թվարկվում են 91 ձեռագրեր։ Ցուցակի 3-րդ էջում Հովսեփ վրդ. Փինաչյանը 1875 թվականին հետևյալ նշումն է կատարել. «Տպագրած և գրչագիր՝ 128, ձեռագիր՝ 75, 12 օրինակ պակաս, Յովսէփ վրդ. Փինաչեան։ Ստեփան Մխիթարեանի ժամանակ՝ 1875, 75 համար, մի քանիսը կրկնակի օրինակով»։ Այս նշումից կարելի է հետևեցնել, որ 1875-ին Մ. Սմբատյանի ցուցակի 91 ձեռագրերից մնացել էր 79-ը (75+4 կրկնակի օրինակներ)։*

Ե. Ցուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, [Տաթև], 1893[9]: *Սույն ցուցակի հեղինակն անհայտ է։ Ցուցակում ձեռագրերը թեև համարակալված են 1—88, սակայն նկարագրված ձեռագրերի իրական քանակը հավասար է 73-ի, որովհետև 65—79 թվահամարների վրայով թռիչք է կատարված (—15)։ Այս ցուցակում ևս, առանց մատենագիտական տվյալների, բերված են միայն ձեռագրերի խորագրերը՝ առավել կամ պակաս ընդարձակությամբ։*

Զ. Նիկողայոս Տեր-Ավետիքյան, Ցուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, [Տաթև], 1899[10]: *Սույն ցուցակում, 1—107 թվահամարների տակ, առանց մատենագիտական անհրաժեշտ տվյալների, համառոտակի նկարագրված են 107 ձեռագրեր։ Ցուցակի վերջում Ն. Տեր-Ավետիքյանը կատարել է հետևյալ հավելումը. «Այլ ևս կայ 9 հատ թղթեայ ձեռագիր Յայսմաւուրք, երեքը կաշեկազմ, վեցն անկազմ և քիչ թերատ, և այլ խոնաւութիւնից, ցեցից, մկներից վնասված ձեռագիրներ, ոմանք սակաւ, բայց ընդհանրապէս գրեթէ անպէտքացած՝ թուով 64 հատ, որով գումարն լինի թանապու շկաֆի մէջ Տաթևի վանքի ձեռագիրների 180 հատ, բացի տաճարում եղած ձեռագիր աւետարանները»։ Եթե ենթադրելու լինենք, որ տաճարում եղած ավետարանները 7-ից ավելի չէին, ապա կստացվի, որ 1863 (187) և 1899 (նկարագրված՝ 107+ Յայսմաւուրք՝ 9+ փչացած՝ 64+ տաճարում՝ 7=187) թվականների ընթացքում ձեռագրերի քանակը մնացել է անփոփոխ։ Սա կարող է ճիշտ լինել միայն թվային տեսա-*

7 Մեսրովբ Սմբատյանց, *Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 126—128։*

8 *Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մ. Մագիստրոսի, № 24։*

9 *Անդ, № 23։*

10 *Անդ, № 22։*